# ՀԱՅ
# ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
# ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐԸ

(Նիւթեր յետագայ ուսումնասիրութեան համար)

*ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ*

*Ցարական Ռուսաստանի հասարակական-քաղաքական միտքի զարգացման իւրայատկութիւններէն մէկն այն է, որ աշխատաւոր խաւերու շահերն արտայայտել յաւակնող ընկերվարական կուսակցութիւններու կազմաւորումը նախորդեց գոյառմանը ազատականութիւն* (լիպերալիզմ) *դաւանող կուսակցութիւններու, որոնց հետեւորդները առաջին հերթին քաղաքային միջավայրի մէջ հասակ առնող արդիւնաբերող եւ առեւտրական խաւերն էին:*

*Կովկասահայ իրականութիւնն ալ բացառութիւն չկազմեց:* 1887-*ին Ժընեւի մէջ ծնունդ առած Հնչակեան Կուսակցութիւնը, ապա՝* 1890-*ին Թիֆլիսի մէջ ստեղծուած Հայ Յեղափոխականների* (1892-*էն ետք՝ Յեղափոխական*) *Դաշնակցութիւնը սկզբնական շրջանին գլխաւորաբար արեւելահայ երիտասարդներէ կազմուած էին, որոնց համար ընկերվարական գաղափարախօսութիւնը հայ ժողովուրդի վէրքերուն լաւագոյն սպեղանին կը հանդիսանար: Թէեւ զոյգ կուսակցութիւններն ալ առաջին տարիներուն իրենց ուշադրութիւնը սեւեռած էին Արեւմտահայաստանի ազատագրութեան հարցին վրայ՝* 1903-*ին ցարական կառավարութեան կողմէ Հայաստանեայց Եկեղեցւոյ կալուածներու բռնագրաւումն ու* 1905-1907 *թուականներու համառուսաստանեան պուրժուա-դեմոկրատական առաջին յեղափոխութիւնը փոփոխութեան ենթարկեցին այս դրութիւնը, եւ Հնչակ-*

եաններն ու դաշնակցականները իրենք զիրենք գտան ցարական կառավարութեան ընդդիմադիր ընկերվարական կուսակցութիւններու շարքին։ Այս դիրքորոշումը քիչ թէ շատ անխախտ մնաց մինչեւ ցարականութեան վերջնական տապալումը։ Հնչակեան Կուսակցութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան կողքին, կովկասահայ իրականութեան մէջ իրենց հետեւորդներն ունեցան Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութեան երեք (պոլշեւիկ, մենշեւիկ, «սպեցիֆիկ») թեւերն ու Ռուսաստանի Սոցիալիստ-Յեղափոխական Կուսակցութիւնը։

Համառուսաստանեան առումով, ժողովրդավարական-ազատական գաղափարախօսութիւնը կրող Ժողովրդական Ազատութեան Կուսակցութեան հիմնադիր համագումարը տեղի ունեցաւ Մոսկուայի մէջ 12–18 Հոկտեմբեր 1905-ին։ Կուսակցութեան — որ աւելի հանրածանօթ էր Քատէթ անունով, կրճատումը՝ Քոնսթիթուցիոնալ (սահմանադրական) - Դեմոկրատ որակաւորման — ծրագիրը հաստատուեցաւ 5–11 Յունուար 1906-ին Ս. Պետերսպուրկի մէկ կայացած երկրորդ համագումարի ընթացքին։ Քատէթները կը պահանջէին, որ Ռուսաստանը դառնար սահմանադրական միապետութիւն, եւ ուր յարգուէին բոլոր դեմոկրատական ազատութիւնները։ Ռուսաստանի ընկերային-տնտեսական զարգացումը խոչընդոտող հողային հարցին որպէս լուծում՝ կ՚առաջարկէին սակաւահող եւ հողազուրկ գիւղացիութիւնը ապահովել հողով, պետական ու վանքապատկան հողերու հաշուին, ինչպէս նաեւ «արդարացի» (ոչ շուկայական) գիներով փոխհատուցուած մասնատիրական հողերու մասնակի օտարմամբ։ Յիշենք, որ ընկերվարական գաղափարախօսութիւնը դաւանող Ռուսաստանեան Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութիւնը ստեղծուած էր 1898-ին, իսկ Սոցիալիստ-Յեղափոխական Կուսակցութիւնը՝ 1901-1902-ի սկիզբը։

Քատէթական Կուսակցութեան հետեւորդներուն մէջ բնականաբար կային նաեւ հայեր։ Սակայն, կուսակցութիւնը իր ծրագրին մէջ Ռուսաստանի ազգային խնդիրներուն վերաբերեալ արմատական լուծում չէր առաջարկեր։ Ընդհակառակը, մանր ազգութիւններուն կը խոստանար միայն ընդհանուր քաղաքացիական ազատութիւններ եւ ազգային-մշակութային ինքնավարութիւն, առանց դոյզն իսկ փոփոխութեան ենթարկելու Ռուսական Կայսրութեան միատարր պետական ու վարչական կառուցուածքը։ Կուսակցութեան ղեկավարութեան այս սկզբունքին վրայ հաստատ մնալը, յատկապէս 1905–1907-ի յեղափոխութեան ամբողջ ընթացքին, երբ դասակարգային գիտակցութեան աճին զուգահեռ սկսաւ ակնյայտ դառնալ ազգային գիտակցութեան զարթօնքը նաեւ, պատճառ հանդիսացաւ, որ հայ քատէթ-

ները, յատկապէս այսպէս կոչուած «մշակական» (Թիֆլիսի մէջ հրատարակուող Մշակ թերթին անունով) հոսանքի ներկայացուցիչները փորձ կատարէին ստեղծելու քատէթական աշխարհահայեացքով՝ բա՛յց հայկական ինքնուրոյն կուսակցութիւն մը[1]:

1906 թուականի Յունուար 3-ին այդ նպատակին իրագործելու համար հրաւիրուեցաւ «Սահմանադրական-Դեմոկրատիական Կուսակցութեան Հայ Արմատական Ֆրակցիա»ի հիմնադիր ժողովը, որուն մասնակցեցան Յովսէփ Ամիրխանեանը, Համբարձում Առաքելեանը, Ալեքսանդր Խատիսեանը, Պ. Ղամբարեանը, Լեւոն Ղուլեանը, Սոկրատ Մելիք-Ադամեանը, Ալեքսանդր Մելիք-Ազարեանը, Սամսոն Յարութիւնեանը, Լեւոն Սարգսեանը, Կարապետ Ստեփանեանը, Յովհաննէս Սպենդիարեանը, Յ. Փիրալեանը եւ Ալեքսանդր Քալանթարը, մասնագիտութեամբ՝ մէկ արդիւնաբերող, չորս փաստաբան, երկու գրականագէտ, երկու բժիշկ, մէկ տնտեսագէտ, մէկ ճարտարագէտ եւ երկու գիւղատնտես: Որոշուեցաւ իբրեւ նոր ստեղծուելիք կուսակցութեան ծրագրի հիմք ընդունիլ ռուս քատէթներու ծրագիրը, աւելի՝ պահանջել Անդրկովկասի համար երկրամասային ինքնավարութիւն[2]: 1906-ի վերջաւորութեան այս կուսակցութիւնը տակաւին կազմաւորման ընթացքի մէջ էր: Նոյեմբերին ծանուցուեցաւ ժամանակաւոր բիւրոյի կազմաւորման մասին, որուն անդամ ընտրուեցան Ալ. Քալանթարը, Մ. Աթաբէգեանը, Ք. Վերմիշեանը, Կ. Ստեփանեանը, Յ. Սպենդիարեանը, Հ. Առաքելեանը եւ ուրիշներ: Անոնք հրապարակեցին յայտարարութիւն մը, ուր անգամ մը եւս կը նշուէր թէ նորաստեղծ կուսակցութիւնը ընդունելու էր քատէթներու ծրագրին սկզբունքային կէտերը[3]:

Յեղափոխութեան պարտութիւնը եւ պահպանողական ուժերու վերահաս ճնշիչ վարչակարգը պատճառ հանդիսացան, որ կովկասահայ ինքնուրոյն Սահմանադիր-Դեմոկրատական Կուսակցութեան ստեղծումը յետաձգուէր մինչեւ 1917-ի Փետրուարեան Յեղափոխութիւնը:

Այստեղ կ՚արժէ հարեւանցի կերպով մատնանշել, թէ նոյն ատեն ուրոյն ազգային դեմոկրատական-ազատական կուսակցութիւններ ստեղծելու փորձ կատարեցին Կովկասի միւս ազգութիւններուն ներկայացուցիչներն ալ: Օրինակ, 1905-1906-ին ստեղծուած Ռուսական Իսլամներու Միութիւնը (Իթթիֆաք), որ թէեւ կը յաւակնէր ներկայացնել Ռուսական Կայսրութեան բոլոր մահմետականներուն շահերը, ըստ իրողութեան, սակայն, Վոլկայի եւ Ուրալի թաթարական քաղքենի դասի եւ մտաւորականութեան կուսակցութիւնն էր միայն, որ կրկնելով Քատէթական Կուսակցութեան ծրագրային սկզբունքները՝ յաւելեալ ըլլալով կը պահանջէր մահմետականներու հա-

մար ազգային ու կրօնական իրաւունքներու հաւասարութիւն, տեղական ինքնակառավարման մարմիններու լիազօրութեանց ընդլայնում եւ տեղական լեզուներով կրթութեան ազատութիւն: Իթթիֆաքի 15 հոգինոց կեդրոնական կոմիտէէն ներս կար միայն մէկ ազրպէյճանցի՝ Թոփչիպաշեւը: Գրեթէ նոյն ատեն կազմաւորուեցաւ Իսլամական Սահմանադրական Կուսակցութիւնը՝ Քատէթական Կուսակցութեան Պաքուի մասնաճիւղին կից: Պաքուցի իսլամ ազատականները կը պահանջէին, որ Անդրկովկասը դառնար ինքնավար շրջան մը՝ իր օրէնսդիր մարմնով (Սէյմ) եւ ցեղային միատարր վարչական բաժանումներով: Երկու կուսակցութիւններն ալ, իրենց հայ գաղափարակիցներուն նման, փաստօրէն հրապարակէն չքացան 1905–1907-ի յեղափոխութեան պարտութենէն ետք[4]:

Կովկասահայ ինքնուրոյն Սահմանադիր-Դեմոկրատական Կուսակցութիւն ստեղծելու աշխատանքներն անգամ մը եւս թափ առին 1917-ի համառուսաստանեան փետրուարեան պուրժուա-դեմոկրատական յաղթական յեղափոխութենէն անմիջապէս ետք՝ նոյն տարուան Մարտ-Մայիս ամիսներուն[5]: Նորաստեղծ կուսակցութիւնը կոչուեցաւ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն: Սկզբնական շրջանին, անիկա ամբողջովին կ'ընդունէր քատէթական ծրագիրը: Պարզապէս աւելի լայն դրուած էր հայ ազգային հարցը — հայաբնակ շրջաններու համար տեղական ինքնավարութիւն, եկեղեցական կալուածներ եւ Արեւմտահայաստանի խնդիրը: Կուսակցութեան տեսաբաններէն Երուանդ Յարութիւնեանի բառերով՝ «Նոր կուսակցութիւնը միայն կազմակերպչական ձեւով էր հայկական: Ըստ էութեան՝ նա Կադետական Կուսակցութեան հայկական ֆրակցիան էր... քանի որ նրա ծրագրի մէջ ազգային հարցը երկրորդական տեղ էր բռնում. Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը գերազանցապէս ռուսական պետական կուսակցութիւն էր»[6]:

Փետրուարեան Յեղափոխութիւնը Ռուսաստանն առժամաբար դարձուց աշխարհի ամենէն դեմոկրատական երկիրը, բայց չկարողացաւ պատրաստի դեղամիջոցներ տրամադրել երկրի երկարամեայ հիւանդութեանց: Հետզհետէ արմատականացան քաղաքական համոզումները: Գոյացաւ քաղաքական ուժերու բեւեռացում: Այս մթնոլորտին մէջ փոփոխութեան ենթարկուեցան նաեւ Հայ Ժողովրդական Կուսակցութեան ծրագրային սկզբունքները: 27–30 Սեպտեմբեր 1917-ին, Թիֆլիսի մէջ տեղի ունեցաւ կուսակցութեան առաջին համագումարը, որ պաշտօնապէս վաւերացուց ծրագիրը: Կուսակցութիւնը որոշեց դուրս գալ Ռուսական Կայսրութեան սահմաններէն եւ իր գործունէութիւնը տարածել «ամէն տեղ, ուր կայ հայութիւն, բայց ամէն տեղ էլ յարմարելով տեղական պայմաններին»[7]: Այլեւս կուսակ-

ցութեան կրնային անդամակցիլ ոչ միայն ռուսահպատակ՝ այլեւ բոլոր հայերը։ Աւելի արմատականացան հայ ազգային պահանջները (Անդրկովկասի սահմանագատում՝ ըստ ազգային կազմի, ազգային-տարածքային ինքնավարութիւն՝ Ռուսաստանի կազմէն ներս, Ռուսահայաստանէն դուրս բնակող հայոց համար ազգային-մշակութային արտատարածքային ինքնավարութիւն)[8]։

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը նոր իրադրութիւն ստեղծեց Ռուսական Կայսրութեան համայն տարածքին վրայ, ուրեմն՝ նաեւ Անդրկովկասի մէջ։ Անդրկովկասի երեք ազգութիւններուն ներկայացուցիչներն ստեղծեցին տեղական օրէնսդիր իշխանութեան մարմին մը՝ Սէյմը եւ անոր հաշուետու կառավարութիւն մը։ Ասոր տրամաբանական յաջորդ քայլը եղաւ Անդրկովկասի անկախութեան հռչակումը։ Յետոյ, օսմանեան բանակի դէպի Պաքու յաղթական արշաւին հետեւանքով անդրկովկասեան այս կարճատեւ պետութիւնն ալ տարբաղադրուեցաւ երեք ազգային միաւորներու՝ Վրաստանի, Ատրպէյճանի եւ Հայաստանի։

Հայ Ժողովրդական Կուսակցութիւնն ալ, բնականաբար, պիտի ազդուէր քաղաքական այս սրընթաց փոփոխութիւններէն։ Կուսակցութեան կեդրոնատեղին կը շարունակէր մնալ Թիֆլիս, ուր հաստատուած էր հայ քաղքենի դասակարգը, սակայն ան կը գիտակցէր թէ գործելու եւ ուռճանալու հնարաւորութիւն կրնար ունենալ միայն Հայաստանի մէջ։ 1918-ի Օգոստոսին անիկա սկսաւ հրատարակել Ժողովուրդ թերթը Երեւանի մէջ, որուն առաջին թիւերուն մէջ հրատարակելով առաջին համագումարի ընթացքին վաւերացուած ծրագիրն ու կանոնագրութիւնը՝ անոր իբրեւ ծանօթագրութիւն կը կցէր տող մը, ուր ընթերցողին կը թելադրուէր ծրագրին մէջ հանդիպող «Ռուսաստանում» բառը կարդալ միշտ՝ «Հայաստանում», իսկ «ռուսերէն» բառը՝ «հայերէն»[9]։ Այս կարճ նախադասութեան մէջ ամփոփուած էր Հայ Ժողովրդական Կուսակցութեան ամբողջ աշխարհահայեացքի եւ գործելակերպի արմատական շրջադարձը։ Ռուսահայկական Կուսակցութենէն անիկա կը վերածուէր հայաստանեան կուսակցութեան մը։

Հայ Ժողովրդական Կուսակցութիւնն ունէր 6 ներկայացուցիչ 47 անդամ հաշուող Հայաստանի Խորհուրդէն ներս, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան առժամեայ օրէնսդիր իշխանութեան դերը կատարող նշանակովի մարմին մըն էր։ 1918-ի Նոյեմբեր 4-ին ժողովրդականները մտան Յովհաննէս Քաջազնունիի գլխաւորած Կոալիսիոն կառավարութեան մէջ, բայց սա, ըստ էութեան, չփոխեց կուսակցութեան ընդդիմադիրի իրավիճակը հանրապետութեան քաղա-

քական կեանքէն ներս։ Կոալիսիոն կառավարութիւնն ստեղծուած էր գրեթէ բացառապէս արտաքին երեւոյթները փրկելու համար եւ զայն գոյացնող Հ. Յ. Դաշնակցութեան ու Ժողովրդականներու միջեւ չէր համաձայնեցուած երկրի ընկերային-տնտեսական քաոսային վիճակը մեղմելու ձգտող որեւէ ծրագիր։ Միայն Ժողովրդականներու աջակցութիւնն ապահովելու համար դաշնակցականները յօժարած էին հողային բարենորոգման հարցը յետաձգել մինչեւ սահմանադիր ժողովի կամ խորհրդարանի գումարումը[10]։ Մինչ Հ. Յ. Դաշնակցութիւնը կը նախատեսէր կերտել նոր Հայաստան մը՝ հիմնուելով 1917-ի Փետրուարեան Յեղափոխութեան ընկերային-տնտեսական նուաճումներուն վրայ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութեան տեսակէտը բոլորովին տարբեր էր։ «Մեզ, Հայաստանի քաղաքացիներիս համար ռուսական յեղափոխութիւնը դադարել է դեռ 1918 թ. ամառուան ամիսներից», կը գրէր Ժողովուրդը, «երբ մենք վերջնականապէս անջատուեցինք Ռուսաստանից եւ մեր անկախութիւնը ձեռք բերինք...։ Մեզ համար նա գոյութիւն ունի որպէս դրսի աշխարհում կատարուող քաղաքական երեւոյթներից մէկը...։ Ռուսական Յեղափոխութեան այս կամ այն ընթացքը մեզ համար անմիջական գործօն չի կարող լինել։ Նրա հետեւանքները կարող են մեր ազգի եւ պետութեան համար անուղղակի նշանակութիւն ունենալ միայն»[11]։ Երբ 6 Դեկտեմբեր 1918-ին Հայաստանի Խորհուրդին ներկայացուեցաւ օրինագիծ մը, որուն համաձայն Ռուսական Փետրուարեան Յեղափոխութեան ընթացքին ընդունուած բոլոր օրէնքները հաւաքաբար կիրարկելի պիտի դառնային Հայաստանի մէջ՝ Ժողովրդականները դէմ քուէարկեցին, բայց մնացին փոքրամասնութեան մէջ[12]։

Քաղաքական նոր իրավիճակը անհրաժեշտ կը դարձնէր, որ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը որոշակի փոփոխութեանց ենթարկէր եթէ ո՛չ իր քաղաքական սկզբունքները՝ գոնէ իր ծրագրային սկզբունքները։ Այս հարցով զբաղեցաւ 27 Ապրիլ-1 Մայիս 1919-ին Երեւանի մէջ գումարուած կուսակցութեան Հայաստանի կոմիտէներու ներկայացուցիչներու խորհրդակցութիւնը։ Զեկուցող Յովհաննէս Ստեփանեանը յայտնեց թէ նախորդ երկու տարուան քաղաքական զարգացումներուն պատճառով իրենց իմաստը կորսնցուցած էին Ռուսահայաստանին ու Տաճկահայաստանին վերաբերող ծրագրային կէտերը, քանի որ արդէն քաղաքական հրապարակի վրան էր Միացեալ եւ Անկախ Հայաստանի ստեղծման խնդիրը։ Այս մէկը, ինչպէս նաեւ հողային, արտահայաստանեան հայերու եւ այլ ծրագրային խնդիրներ, ըստ Ստեփանեանի, պէտք էր որ վերաքննուէին եւ ծրագրի ինքնաբերաբար կատարուելիք միւս փոփոխութիւններուն հետ վաւերացուէին յաջորդ համագումարին կողմէ։

Այդ երկրորդ համագումարը տեղի ունեցաւ 9–15 Սեպտեմբեր 1919-ին՝ Երեւանի մէջ։ Մինչ այդ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը դուրս եկած էր կառավարութեան կազմէն եւ նոյնիսկ հրաժարած՝ խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցելէ։ Այսուհանդերձ, համագումարը խորացուց Հայ Ժողովրդական Կուսակցութեան հայաստանեան կուսակցութիւն դառնալու գործընթացը։ Կուսակցութեան կեդրոնատեղին փոխադրուեցաւ Երեւան, իսկ Ժողովուրդը դարձաւ կուսակցութեան պաշտօնաթերթը։ Համագումարի քննարկած կարեւորագոյն ծրագրային խնդիրը հողային հարցն էր։ Կուսակցութիւնը որոշեց առաջարկել հողը դարձնել պետական սեփականութիւն, որ ժառանգաբար օգտագործուելու համար համամասնաբար պիտի տրուէր աշխատաւոր գիւղացիութեան։ Պետութիւնը արդարացի (ո՛չ շուկայական) գնահատութեամբ սեփականատէրերէն պիտի գնէր աշխատաւորական չափը գերազանցող հողերը, բացի տուներու, գործարաններու, այգիներու եւ բանջարանոցներու համար օգտագործուած հողերէն, եւ զանոնք բաշխէր աշխատաւոր գիւղացիութեան եւ արգիլէր հողի առուծախը(14)։ Անհրաժեշտ փոփոխութեան ենթարկուեցաւ ազգային հարցերուն վերաբերող բաժինը։ Մնացեալ փոփոխութիւնները կը կ·էին թաքթիքական բնոյթ՝ ձգտելով կուսակցութեան քաղաքական սկզբունքները յարմարեցնել անկախ Հայաստանի առկայ գոյավիճակին։

Հայ Ժողովրդական Կուսակցութեան երրորդ համագումարը նախատեսուած էր գումարել 27 Օգոստոս 1920-ին։ Քաղաքական անկայուն իրավիճակին պատճառով ան յետաձգուեցաւ Սեպտեմբեր 12-ին, ապա՝ Հոկտեմբեր 10-ին, եւ վերջապէս՝ երբեք չկայացաւ Թրքական արշաւանքի ու Հայաստանի խորհրդայնացման հետեւանքով։ Համագումարի օրակարգի ութերորդ կէտը կը վերաբերէր ծրագրային խնդիրներուն։ Դժբախտաբար կարելի չեղաւ պարզել թէ ծրագրային ո՛ր հարցերը նկատի առնուած էին կուսակցութեան ղեկավարութեան կողմէ։

* * *

Այս համառօտ նախաբանով երբեք նպատակ չունեցանք շարադրելու պատմականը Հայ Ժողովրդական Կուսակցութեան գաղափարախօսական եղափոխութեան։ Յոյս ունինք, որ ան կը փոխանցէ էական նախնական տուեալներ միայն, որոնք անհրաժեշտ են հրատարակուող ծրագրային փաստաթուղթերը լաւ հասկնալու եւ արժեւորելու համար։

Հայաստանի մէջ նախորդ տասնամեակներուն տիրող գաղափարախօսութիւնը թոյլ չէր տար, որ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը, իբրեւ «պուրժուական», «քադէթական» կուսակցութիւն արժանանար առարկայական հետազօտութեան: 70 տարուան ընթացքին, Հայ Ժողովրդական Կուսակցութեան վերաբերող որեւէ պատմագիտական ուսումնասիրութիւն լոյս չէ տեսած: 1987–ին, Երեւանի մէջ, Դ. Ս. Խեչումեանը պաշտպանեց Հայ ժողովրդական Կուսակցութեան գաղափարախոսութեան ու քաղաքականութեան քննադատական վերլուծութիւնը (1917–21 թթ.) աւարտաճառը, պատմական գիտութիւններու թեկնածուի աստիճան, բայց այս գործը ընթերցող հասարակութեան մատչելի չէ տակաւին:

Վաչէ Ղազարեանը Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վաւերագրեր (Պէյրութ, 1988) ժողովածուն կազմելու ատեն մտադրած էր ընդգրկել նաեւ Հայ Ժողովրդական Կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը, բայց այդ օրերուն Հայաստանի մէջ բռնկած Արցախեան Պահանջատիրական Շարժումը պատճառ հանդիսացաւ, որ սոյն փաստաթուղթերու առաքումն ուշանար եւ Ղազարեանին գործը տպարան երթար առանց Հայ Ժողովրդական Կուսակցութեան համար նախատեսուած բաժինին: Անձամբ տեղեակ ըլլալով Վաչէ Ղազարեանի չիրականացած ցանկութեան, անցեալ տարի, երբ Երեւանի Ազգային Գրադարանին եւ Մատենադարանին մէջ պրպտումներ կը կատարէի Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան բաժանմունքէն ներս աւարտական աշխատանքս պատրաստելու միջոցիս՝ յայտնաբերելով այս կուսակցութեան 1917 եւ 1919 թուականներու ծրագիրներն ու կանոնադրութիւնները՝ որոշեցի զանոնք զուգահեռ հրապարակել՝ յետագայ ուսումնասիրողներու գործը հեշտացնելու նպատակով:

1917 թուականի ծրագիրը քաղած եմ Կուսակցութեան Երեւանի պաշտօնաթերթ Ժողովուրդի 1918 թուականի Սեպտեմբեր 26–ի եւ 29–ի թիւերէն, իսկ 1919–ի ծրագիրը՝ նոյն թուականին հրատարակուած յատուկ գրքոյկէ մը: Յիշեմ նաեւ, թէ 1919–ի ծրագիրը մաս առ մաս լոյս տեսաւ Ժողովուրդի 6, 8 եւ 13 Փետրուար 1920–ի թիւերուն մէջ: Ուղղագրութիւնն ու կէտադրութիւնը պահած եմ անփոփոխ: Որոշ փոփոխութեան ենթարկած եմ տարբեր բաժիններու եւ կէտերու հերթականութիւնը՝ որպէսզի ընթերցողը կարողանայ աւելի դիւրութեամբ բաղդատել թէ ինչպիսի՞ փոփոխութիւններու ենթարկուած է ծրագիրը եւ միաժամանակ խորհի թէ ինչո՞ւ: Ծրագրի բաժնին մէջ իբրեւ հիմք ընդունած եմ 1917–ի ծրագիրը, իսկ 1919–ի ծրագրի ներքին յաջորդականութիւնը յարմարեցուցած եմ առաջինին: Կանոնադրութեան պարագային՝ հիմք ընդունած եմ 1919–ինը, պարզապէս

*որովհետեւ ներքնապէս աւելի կուռ է անիկա։ Ընթերցողին ուշադրութեան կը յանձնեմ կատարուած կանոնագրական կարեւոր բարեփոխութիւնները եւ աւելցած կազմակերպչական նոր օղակները։ Շարժառիթը, բնականաբար, Ռուսական Կայսրութեան տարբաղադրումն էր, անդրկովկասեան երեք հանրապետութիւններու եւ յատկապէս՝ անկախ Հայաստանի ստեղծումով։*

*Ա. Ս.*

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐԻ ԲԱՂԴԱՏԱԿԱՆԸ

## ՀԱՅ. ԺՈՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

**վերաքննուած առաջին համագումարում 1917 թ. Սեպտ. 27-ին**

1. Հայ Ժող. Կուսակցութիւնը համազգային է. նա կարող է ճիւղեր բանալ թէ Ռուսաստանում եւ թէ նրանց սահմաններից դուրս:

2. Հայ Ժող. Կուսակցութիւնը ապադասակարգային է. նրա մէջ անարգել կարող են մտնել հայ ազգին պատկանող բոլոր չափահաս անձերը, որոնք ընդունում են կուսակցութեան ծրագիրը, առանց սեռի, դաւանանքի եւ դասակարգի խտրութեան:

3. Ռուսաստանում բնակւող օտարահպատակ հայերը կարող են կուսակցութեան անդամ լինել, սակայն նրանք չեն մասնակցում պետական հարցերի լուծման եւ պետական հիմնարկութիւնների ընտրութիւններին:

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

**ընդունուած երկրորդ համագումարում 1919 թւի 7-15 Սեպտեմբեր, Երեւանում**

### Ա.
### ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

#### I

Ընդունելով ազգը եւ նրա մշակոյթը որպէս սոցիալ-քաղաքական եւ կուլտուրական առաջնակարգ գործօն եւ համարելով նրանց զարգացումը համապատասխան պատմական պրոցեսին, քաղաքակրթութեան պահանջներին եւ անհատականութեան ձգտումներին՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը իր գլխաւոր նպատակն է համարում պաշտպանել բովանդակ հայ ժողովրդի իրաւունքները եւ ծառայել նրա ազգային մշակոյթի ու պետականութեան զարգացման:

#### II

Ի նկատի ունենալով հասարակութեան եւ անհատի ներդաշնակ զարգացման անհրաժեշտութիւնը եւ ղեկավարուելով ժողովրդապետութեան սկզբունքով, Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը ձգտում է հաստատել Հայաստանում իրաւական եւ պարլամենտական կարգեր:

#### III

Համարելով կապիտալիզմը մարդկութեան պատմական զարգացման ընթացքում անհրաժեշտ եւ անխուսափելի մի դարաշրջան եւ ընդունելով, որ նա մասնաւորապէս Հայաստանում դեռ սաղմային դրութեան մէջ է գտնւում եւ ունի կատարելու խոշոր շինարարական դեր՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը նպաստելու է Հայաստանում կապիտալի հաստատման եւ նրա զարգացման յօգուտ հայ ժողովրդի եւ հայ պետութեան բարգաւաճման, իսկ սոցիալական բարդ պրոբլեմի արդար լուծման նպատակով Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը, չը հա-

մարելով դասակարգային հակամարտութիւնները որպէս վճռական միջոց սոցիալական խնդիրների լուծման համար եւ չը յենելով առանձնապէս եւ ոչ մի դասակարգային շերտաւորման վրայ, ձգտելու է սոցիալական լայն բարեփոխութիւնների միջոցով աստիճանաբար վերացնել մարդ անհատի շահագործումը միւսի կողմից:

IV

Համարելով էվոլիւցիան (բնաշրջումը) որպէս բնութեան եւ մարդկային հասարակութեան զարգացման անյողդողդ օրէնք՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը իր բոլոր պահանջները իրագործելու է աստիճանաբար, իրաւական պարլամենտական ճանապարհով, հետեւելով ռէալ քաղաքականութեան:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
## Ա) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

4. Ռուսաստանի բոլոր քաղաքացիները, առանց սեռի, կրօնի եւ ազգի խտրութեան, հաւասար են օրէնքի առաջ: Բոլոր ազգերի դասային տարբերութիւնները եւ անձի ու ստացուածքի իրաւունքի սահմանափակումները, վերացւում են:

5. Ամեն մի քաղաքացի վայելում է խղճի ու դաւանանքի ազատութիւն: Չէ թոյլ տրւում ոեւէ հալածանք դաւանանքի կամ համոզմունքի, դաւանանքը փոխելու կամ նրանից հրաժարվելու պատճառով:

6. Ամեն ոք ազատ է կատարել իր կրօնական եւ աստուածապաշտական արարողութիւնները եւ քարոզել իր դաւանանքը, եթէ միայն սրանք չեն պարունակում այնպիսի գործողութիւններ, որոնք պատժելի են քրէական օրէնսդրութեամբ:

7. Ոչ մի եկեղեցի կամ դաւանութիւն պետութեան մէջ չը պէտք է վայելէ առանձին արտօնութիւն: Եկեղեցին անջատ է պետութիւնից:

8. Ամեն ոք ազատ է արտայայտել իր մտքերը բերանացի կամ գրով եւ նրանց հրատարակել մամուլի կամ այլ միջոցով: Գրաքննութիւնը,

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
## Բ.
## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

1. Հայաստանի բոլոր քաղաքացիները առանց սեռի, կրօնի եւ ազգի խտրութեան հաւասար են օրէնքի առաջ:

2. Ամեն մի քաղաքացի վայելում է խղճի ու դաւանանքի ազատութիւն: Չի թոյլատրւում որեւէ հալածանք դաւանանքի կամ համոզմունքի, դաւանանքը փոխելու կամ նրանից հրաժարւելու պատճառով:

3. Ամեն ոք ազատ է կատարել իր կրօնական եւ աստուածապաշտական արարողութիւնները եւ քարոզել իր դաւանանքը, եթէ միայն սրանք չեն պարունակում այնպիսի գործողութիւններ, որոնք պատժելի են քրէական օրէնսդրութեամբ:

4. Ոչ մի եկեղեցի կամ դաւանութիւն պետութեան մէջ չը պէտք է վայելէ առանձին արտօնութիւն:

5. Եկեղեցին անջատ է պետութիւնից:

6. Ամեն ոք ազատ է արտայայտել իր մտքերը բանաւոր կամ գրաւոր եւ հրատարակել նրանք մամուլի կամ այլ միջոցով: Գրաքննութիւնը,

ընդհանուր կամ յատուկ, ինչ անուան տակ էլ որ լինի, վերացվում է եւ չէ կարող վերանորոգուել: Բերանացի կամ տպագրական խօսքի միջոցով կատարուած յանցանքների կամ օրինազանցութիւնների համար յանցաւորները պատասխանատու են միայն դատարանի առաջ:

9. Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին իրաւունք է տրվում կազմակերպել հրապարակական ժողովներ, բացօթեայ կամ փակ շինութիւնների մէջ՝ ամեն տեսակ հարցեր քննելու համար:

10. Ռուսաստանի բոլոր քաղաքացիներն իրաւունք ունեն հիմնելու միութիւններ եւ ընկերութիւններ, առանց այս մասին թոյլտուութիւն խնդրելու:

11. Պետիցիա տալու իրաւունք ունեն ինչպէս առանձին անհատները, այնպէս էլ ամեն տեսակ խմբակցութիւններ, միութիւններ ու ժողովներ:

12. Իւրաքանչիւր մէկի անձը եւ բնակարանը անձեռնմխելի են:

13. Մասնաւոր բնակարաններ մտնելը, խուզարկութիւններ կատարելը, իրեր վերցնելը, մասնաւոր գրագրութիւն բանալը, թոյլ են տըրվում միայն օրէնքով ցոյց տրված դէպքերում, այն էլ միայն դատարանի վճռով: Ամեն մի ձերբակալված անհատ քաղաքներում եւ այն տեղերում, որ տեղ կայ դատարանական իշխանութիւն՝ 24 ժամուայ ընթացքում, իսկ միւս տեղերում երեք օրուայ ընթացքում, պէտք է կամ արձակուի, կամ յանձնուի դատական իշխանութեան: Ամեն մի ձերբակալում, որ տեղի է ունեցել առանց բաւարար հիմունքի կամ աւելի երկար է տեւել քան օրէնքով սահմանուած է, իրաւունք է տալիս տուժողին իր վնասների փոխարինութիւնը պահանջելու պետութիւնից:

14. Ոչ ոք չէ կարող հալածանքի եւ պատժի ենթարկուել այլպէս, քան օրէնքի հիման վրայ՝ դատական իշխանութեան եւ օրէնքով սահմանուած դատարանի միջոցով: Ոչ մի արտակարգ դատարան թոյլ չէ տրվում:

15. Ռուսաստանի հիմնական օրէնքը պետութեան մէջ բնակող բոլոր ազգութիւններին պէտք է երաշխաւորէ ազատ կուլտուրական ինքնորոշ-

ընդհանուր կամ յատուկ, ինչ անուան տակ էլ որ լինի, վերացւում է եւ չէ կարող վերանորոգւել: Բանաւոր կամ տպագրական խօսքի միջոցով կատարուած յանցանքների կամ օրինազանցութիւնների համար յանցաւորները պատասխանատու են միայն դատարանի առաջ:

7. Բոլոր քաղաքացիներին իրաւունք է տրւում կազմակերպել հրապարակային ժողովներ բացօթեայ կամ փակ շինութիւնների մէջ՝ ամեն տեսակ հարցեր քննելու համար:

8. Քաղաքացիներն իրաւունք ունին հիմնելու միութիւններ եւ ընկերութիւններ, առանց այս մասին թոյլտուութիւն խնդրելու՝ միայն յայտնելով ի գիտութիւն պետական իշխանութեան:

9. Պետիցիա տալու իրաւունք ունեն ինչպէս առանձին անհատները, այնպէս էլ ամեն տեսակ խմբակցութիւններ, միութիւններ եւ ժողովներ:

10. Իւրաքանչիւր մէկի անձը եւ բնակարանը անձեռնմխելի են:

11. Մասնաւոր բնակարաններ մտնելը, խուզարկութիւններ կատարելը, իրեր վերցնելը, մասնաւոր գրութիւններ բանալը թոյլ են տրւում միայն օրէնքով ցոյց տրուած դէպքերում, այն էլ միայն դատարանի վճռով: Ամեն մի ձերբակալուած անհատ քաղաքներում եւ այլ տեղերում, որտեղ կայ դատարանական իշխանութիւն 24 ժամուայ ընթացքում պէտք է կամ ազատ արձակուի, կամ յանձնուի դատական իշխանութեան: Ամեն մի ձերբակալում, որ տեղի է ունեցել առանց բաւարար հիմունքի կամ աւելի երկար է տեւել, քան օրէնքով սահմանուած է, իրաւունք է տալիս տուժողին իր վնասների հատուցումը պահանջելու պետութիւնից:

12. Ոչ ոք չէ կարող հալածանքի եւ պատժի ենթարկւել այլպէս, քան օրէնքի հիման վրայ՝ դատական իշխանութեան եւ օրէնքով սահմանուած դատարանի միջոցով:

ման իրաւունք, այն է լիակատար ազատութիւն գործ ածելու հասարակական կեանքում զանազան լեզուներ եւ բարբառներ, ազատութիւն հիմնելու եւ պահելու ամէն տեսակ ընկերութիւններ եւ կրթական ու գիտական հիմնարկութիւններ, որոնք նպատակ ունին պահպանել ազգութիւնների լեզուն, գրականութիւնը եւ կուլտուրան:

16. Ռուսերէնը պէտք է լինի պաշտօնական լեզու, պետութեան կենտրօնական հիմնարկութիւնների, զօրքի եւ նաւատորմիղի մէջ:

17. Պետական լեզուի հետ միաժամանակ տեղական լեզուների գործածութիւնը պետական եւ հասարակական հիմնարկութիւնների մէջ եւ այն ուսումնարանների մէջ, որոնք պահպանվում են պետութեան կամ ինքնավար մարմինների հաշւով, կարգադրվում է պետական եւ տեղական օրէնքներով եւ հասարակական հիմնարկութիւնների ձեռքով՝ օրէնքի սահմաններում:

18. Ամեն մի վայրի բնակչութիւնը պէտք է իրաւունք ունենայ կրթութիւն ստանալու իր մայրենի լեզւով ուսման բոլոր աստիճաններում:

## Բ) ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

19. Ռուսաստանը պէտք է լինի դէմօկրատական պարլամենտական հանրապետութիւն. օրէնսդրական իշխանութիւնը պատկանելու է ժողովրդական ներկայացուցչութեան. գործադիր իշխանութեան գլուխ կանգնած պէտք է լինի հանրապետութեան նախագահը, որ ընտրուած կը լինի որոշ ժամանակամիջոցով, ժողովրդական ներկայացուցչութեան կողմից եւ կը կառավարէ երկիրը մինիստրութեան ձեռքով, որ պատասխանատու է ժողովրդական ներկայացուցչութեան առաջ:

20. Ժողովրդական ներկայացուցիչներն ընտրւում են ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի ձայնատւութեամբ, առանց դաւանանքի, ազգի եւ սեռի խտրութեան, համեմատական սկզբունքով:

13. Հայերէնը պէտք է լինի պետական պաշտօնական լեզուն Հայկական Հանրապետութեան սահմաններում:

## ա.
## ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հայաստանը պէտք է լինի դեմոկրատական պարլամենտական հանրապետութիւն. օրէնսդրական իշխանութիւնը պատկանելու է ժողովրդական ներկայացուցչութեան՝ պարլամենտին: Գործադիր իշխանութեան գլուխ կանգնած պէտք է լինի հանրապետութեան նախագահը, որը ընտրուած կը լինի որոշ ժամանակով, պարլամենտի կողմից եւ կը կառավարէ մինիստրական խորհրդի միջոցով, որը պատասխանատու է պարլամենտի առաջ:

2. Պարլամենտի անդամները ընտրւում են ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի ձայնատւութեամբ, առանց դաւանանքի, ազգի եւ սեռի խտրութեան, համեմատական սկզբունքով:

21. Ժողովրդական ներկայացուցչութիւնը մասնակցում է օրէնսդրական իշխանութիւնը իրագործելու, պետութեան ելեւմուտքը սահմանելու մէջ եւ վերահսկում է բարձր ու ստորին ադմինիստրացիայի գործողութիւնների օրինականութեան եւ նպատակայարմարութեան վրայ:

22. Ոչ մի որոշում, կարգադրութիւն, հրաման, ինչ անուն էլ որ կրէ եւ ումնից որ բղխէ, չէ կարող օրէնքի ոյժ ստանալ՝ եթէ հիմնուած չէ ժողովրդական ներկայացուցչութեան որոշման վրայ:

23. Պետական ելեւմուտքը որոշւում է օրէնսդրական կարգով, ոչ աւելի քան մի տարի ժամանակով: Ոչ մի տեսակ սակ կամ տուրք յօգուտ պետութեան, նոյնպէս եւ պետական փոխառութիւնները չեն կարող սահմանել, այլապէս քան օրէնսդրական կարգով:

24. Ժողովրդական ներկայացուցիչների ժողովի անդամներն իրաւունք ունին օրէնսդրական նախաձեռնութեան եւ հարցապնդումի:

### Գ) ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՒՏՕՆՕՄԻԱ

25. Տեղական ինքնավարութիւնը կիրառւում է ամբողջ ռուսական պետութեան մէջ:

26. Տեղական ինքնավար մարմինների ներկայացուցչութիւնը պէտք է ընտրուի ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական ձայնատուութեամբ, առանց սեռի, դաւանանքի եւ ազգութեան խտրութեան:

27. Ստորին ինքնավար միութիւնների ժողովները կարող են ընտրել ու կազմել եւ բարձրագոյն ինքնավար միութիւնների ժողովներ: Նահանգական զեմստվօներն իրաւունք ունեն ժամանակաւոր եւ մշտական միութիւններ կազմել իրար հետ:

28. Տեղական ինքնավար մարմինների իրաւասութիւնը տարածվում է տեղական կառավարութեան բոլոր գործերի վրայ ի միջի այլոց եւ ապահովութեան ու բարեկարգութեան ոստի-

3. Պարլամենտը մասնակցում է օրէնսդրական իշխանութիւնը իրագործելու, պետութեան ելեւմուտքը սահմանելու մէջ եւ վերահսկում է բարձր ու ստորին ադմինիստրացիայի գործողութիւնների օրինականութեան եւ նպատակայարմարութեան վրայ:

5. Ոչ մի որոշում, կարգադրութիւն, հրաման, ինչ անուն էլ որ կրէ եւ ումնից էլ որ բղխէ, չէ կարող օրէնքի ոյժ ստանալ՝ եթէ հիմնուած չէ պարլամենտի որոշման վրայ:

4. Պետական ելեւմուտքը սահմանւում է օրէնսդրական կարգով ոչ աւելի, քան մի տարի ժամանակով: Ոչ մի տեսակ հարկ կամ տուրք յօգուտ պետութեան, նոյնպէս եւ պետական փոխառութիւնները չեն կարող սահմանել այլապէս՝ քան օրէնսդրական ճանապարհով:

6. Պարլամենտի անդամները իրաւունք ունին օրէնսդրական նախաձեռնութեան եւ հարցապնդումի:

### Ե.
### ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

1. Տեղական ինքնավարութիւնը կիրառւում է Հայաստանում ամենուրեք:

2. Տեղական ինքնավար մարմինների ներկայացուցչութիւնը պէտք է ընտրուի ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական ձայնատուութեամբ, առանց սեռի, դաւանանքի եւ ազգութեան խտրութեան:

Ծանօթ. Ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն նրանք, որոնք որոշ ժամանակ ապրել են տուեալ քաղաքում կամ շրջանում:

3. Ստորին ինքնավար միութիւնների ժողովները կարող են ընտրել ու կազմել բարձրագոյն ինքնավար միութիւնների ժողովներ:

4. Տեղական ինքնավար մարմինների իրաւասութիւնը տարածւում է տեղական կառավարութեան բոլոր գործերի վրայ, բացառութեամբ իշխանութեան այն ճիւղերի, որոնք պետական

կանութեան վրայ, բացառութեամբ կառավարութեան այն ճիւղերի, որոնք պետական կեանքի ներկայ պայմաններում անհրաժեշտ է պահել կենտրոնական իշխանութեան ձեռքում: Տեղական ինքնավար մարմինների օգտին պէտք է թողնուի պետական բիւջէի մէջ մտնող եկամուտներից մի մասը:

29. Կենտրոնական իշխանութեան տեղական ներկայացուցիչների գործն է՝ հսկել տեղական ինքնավար մարմինների գործունէութեան օրինականութեան վրայ: Այս առիթով ծագելիք վէճերի ու տարակուսանքների վերջնական լուծումը պատկանում է դատական հիմնարկութիւններին:

30. Հիմնադիր ժողովով պէտք է սահմանուեն տեղական աւտօնօմիայ եւ շրջանային ներկայացուցչական ժողովներ օրէնսդրական իրաւունքով որոշ հարցերի վերաբերմամբ, համաձայն ազգաբնակութեան պահանջներին:

31. Տեղական աւտօնօմ երկիրների սահմանները ազգաբնակութեան ցանկութեամբ, կարող են փոփոխուել՝ աւելի միատարր ազգաբնակութիւն կազմելու համար ըստ ազգային յատկանիշի:

## Դ) ԴԱՏԱՍՏԱՆ

32. Դատաստանական իշխանութիւնն անջատ է վարչականից: Դատաւորներն անփոփոխելի են եւ անկախ: Դատավարութիւնը հասարակական է: Դատարանի առաջ բոլորը հաւասար են:

33. Երդուեալների դատարանների իրաւասութիւնը որոշւում է միմիայն օրէնքով նախատեսուած պատիժների ծանրութեան աստիճանով, անկախ գործի տեսակից. յամենայն դէպս նրանց իրաւասութեան մէջ մտնում են բոլոր պետական ու տպագրական օրէնքի դէմ յանցանքները:

34. Ոչ ոք չէ կարող պատժի ենթարկուել առանց պատշաճաւոր դատարանի վճռի, որ օրինական ոյժ է առացել:

կեանքի ներկայ պայմաններում անհրաժեշտ է պահել կենտրոնական իշխանութեան ձեռքում:

Տեղական ինքնավար մարմինների օգտին պէտք է թողնուի պետական բիւջէի մէջ մտնող եկամուտներից մի մասը:

5. Կենտրոնական իշխանութեան տեղական ներկայացուցիչների գործն է՝ հսկել տեղական ինքնավար մարմինների գործունէութեան օրինականութեան վրայ: Այս առիթով ծագելիք վէճերի վերջնական լուծումը պատկանում է դատական հիմնարկութիւններին:

## Գ.
## ԴԱՏԱՐԱՆ

1. Դատաստանական իշխանութիւնը անջատ է վարչականից: Դատաւորներն անփոփոխելի են եւ անկախ: Դատավարութիւնը հրապարակական է: Դատարանի առաջ բոլորը հաւասար են:

2. Երդուեալների դատարանների իրաւասութիւնը որոշւում է միմիայն օրէնքով նախատեսուած պատիժների ծանրութեան աստիճանով, անկախ գործի տեսակից. յամենայն դէպս նրանց իրաւասութեան մէջ են մտնում բոլոր պետական ու տպագրական օրէնքի դէմ յանցանքները:

3. Ոչ ոք չէ կարող պատժի ենթարկուել առանց պատշաճաւոր դատարանի վճռի, որ օրինական ոյժ է առացել:

35. Արդարադատութեան մինիստրը իրաւունք չունի միջամտելու դատաւորներ նշանակելու կամ տեղափոխելու գործում կամ դատաստանական գործերի վարման մէջ:

36. Դատաւորները պարգեւներ չեն ստանում: Հաշտարար դատաւոր կամ երդուեալ ատենակալ ընտրուելու համար չէ պահանջվում ստացուածքային ցենզ:

37. Փաստաբանական մարմինը կազմակերպվում է իսկական ինքնավարութեան սկզբունքով:

38. Մահվան պատիժն անպայման եւ առմիշտ վերացվում է: Մտցվում է պայմանաւոր դատապարտութիւն: Մտցվում է պաշտպանութիւն՝ նախնական քննութեան միջոցին: Դատարանին յանձնելու գործողութեան մէջ մտցւում է մրցողական սկզբունք:

39. Արդարադատութեան մերձաւորագոյն գործերը պէտք է լինին, քրէական օրինագրքի հիմնական վերաքննութիւնը, վերացումը այն որոշումների, որոնք հակասում են քաղաքական ազատութեան, եւ նրա մշակումը քաղաքացիական օրինագրքի:

## Ե) ՖԻՆԱՆՍ. ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

40. Վերաքննութիւն պետական ելքի բիւջէի, վերացնելու համար այն ծախսերը, որոնք աննպատակայարմար են կամ շատ մեծ են, եւ աւելացնելու համար այն ծախսերը, որոնք ծառայում են ժողովրդի իսկական կարիքներին: Ոչնչացում յետգնման (.................) վճարքների:

41. Զարգացում ուղղակի հարկադրութեան ի հաշիւ կողմնակի հարկադրութեան եւ հետզհետէ վերացում կողմնակի հարկերի, որ դրւած են ժողովրդի համար գործածական իրերի վրայ:

42. Բարեփոխութիւն ուղղակի հարկերի՝ պրոգրէսիվ եկամտային եւ ստացուածքային հարկադրութեան հիման վրայ: Մանր վարկը զարգացնել: Պրոգրէսիվ հարկ սահմանել ժառանգութեան վրայ:

5. Արդարադատութեան մինիստրը իրաւունք չունի միջամտելու դատաւոր նշանակելու կամ տեղափոխելու գործում կամ դատաստանական գործերի վարման մէջ:

6. Դատաւորները պարգեւներ չեն ստանում: Հաշտարար դատաւոր կամ երդւեալ ատենակալ ընտրւելու համար չէ պահանջւում ստացւածքային ցենզ:

4. Փաստաբանական մարմինը կազմակերպւում է իսկական ինքնավարութեան սկզբունքով:

## Դ.
## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Զարգացում ուղղակի հարկադրութեան ի հաշիւ կողմնակի հարկադրութեան եւ հետզհետէ վերացումը կողմնակի հարկերի, որոնք դրւած են ժողովրդի համար գործածական իրերի վրայ:

2. Բարեփոխութիւն ուղղակի հարկերի՝ պրոգրեսիւ, եկամտային եւ ստացւածքային հարկադրութեան հիման վրայ: Մանր վարկի զարգացումն: Պրոգրեսիւ հարկի սահմանում ժառանգութեան վրայ:

43. Առանձին արդիւնաբերութիւնների դրութիւնն ի նկատի ունենալով՝ պակսեցնել մաքսային տուրքերը, էժանացնելու համար ժողովրդական գործածութեան յատուկ իրերը, զարգացնելու արդիւնագործութիւնն ու երկրագործութիւնը:

Ծանօթ. Ռուսաստանում — պէտք է միշտ կարդալ Հայաստանում. ռուսերէնը հայերէն:

## Ջ) ՀՈՂԱՅԻՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆ

44. Սակաւահող եւ անհող գիւղացիների, ինչպէս եւ մանր տնտեսութիւն վարող այլ անձերի հողային կարիքը լրացնելու համար պէտք է յատկացնել պետական, ուդէլների, կաբինետային, վանքապատկան, եկեղեցապատկան, գիւղական եւ ազնուականական բանկերին պատկանած հողերը, նոյնպէս եւ մասնաւոր սեփականատէրերի (ֆիզիկական եւ իրաւաբանական անձերի) հողերը՝ աշխատատորական նորմայից բարձր, որոնք ենթակայ են ստիպողական գրաւման:

45. Ստիպողական գրաւման չեն ենթարկուի մանր կալուածները, որոնք աշխատատորական նորմայից բարձր չեն, զեմստվային եւ այլ հիմնարկութիւնների հողերը, որոնք սահմանուած են կրթական, ընդհ. առողջապահական, գիտական եւ այլ հանրօգուտ նպատակների համար, նոյնպէս եւ ագարակները, պարտէզները, այգիները, բանջարանոցները եւ գործարանների տակ եղած հողերը:

46. Այս հողային պաշարից դուրս գալով պահպանուելիք անտառները եւ պետական մարմինների եւ ինքնավարութիւնների կարգադրութեան տակ թողնուելիք մասերը, նախ եւ առաջ բաւարարութիւն կը տրուի տեղական անհող եւ սակաւահող գիւղացիներին, սահմանուելիք նորմայով: Իսկ մնացորդը կը յատկացուի կամ տեղական ազգաբնակութեան յետագայ կարիքների համար կամ ուրիշ տեղերից եկող գաղթականների համար:

3. Առանձին արդիւնաբերութիւնների դրութիւնն ի նկատի ունենալով՝ պակասեցնել մաքսային տուրքերը, էժանացնելու համար ժողովրդական գործածութեան յատուկ իրերը, զարգացնելու արդիւնագործութիւնն ու երկրագործութիւնը:

## Գ. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ

1. Հողը եւ նրա ծոցում եղած հանքային հարստութիւնները կազմում են պետական սեփականութիւն:

2. Հողը տրւում է միայն այն հողագործին, որը մշակելու է նրան իր եւ իր ընտանիքի աշխատանքով:

3. Հողը չը պէտք է լինի վաճառքի եւ կապալի առարկայ:

4. Հողային անհաւասարութիւնը վերացնելու համար սահմանւում է աշխատատորական չափ:

5. Աշխատատորական նորմաների չափը որոշւում է հողային կոմիտէների միջոցով ըստ տեղական պայմանների, այսինքն՝ հողի քանակի ու յատկութեան տւեալ շրջանում: Հողային աշխատատորական չափը ենթարկւում է փոփոխութեան, եթէ փոփոխւում են հողային պայմանները:

6. Համաձայն աշխատատորական չափի երկրագործին կամ գիւղատնտեսական այլ ճիւղով պարապողին տրւած հողաբաժինը մնում է նրա եւ նրա ժառանգների ձեռքում այնքան ժամանակ նրանք մշակում են հողը:

7. Բռնագրաւած հողերից կազմւում է պետական հողային ֆոնդ:

8. Պետական հողային ֆոնդը աւելացնելու համար ենթարկւում են բռնագրաւման՝

a) Մասնաւոր սեփականատէրերի հողերը, եթէ նրանք աւելի են աշխատատորական նորմայից.

Ծանօթ.- Թէ՛ աշխատաւորական նորման եւ թէ լրացուցիչ հողաբաժինների նորման իւրաքանչիւր տեղում պէտք է որոշուի յատուկ հողային կոմիտէների միջոցով, ըստ հողի քանակութեան, յատկութեան եւ օգտագործման եղանակի:

47. Պետական հողերի պաշարը տրվում է կարօտ ազգաբնակութեան՝ մշտապէս (առանց պայմանաժամի) օգտուելու սկզբունքով, ինչպէս առանձին անհատներին, այնպէս էլ համայնքներին եւ հողագործական ընկերութիւններին, համաձայն տեղերում գոյութիւն ունեցող կարգերի եւ ազգաբնակութեան ցանկութեան:

48. Մասնաւոր սեփականատէրերից հողերը պէտք է գնուեն պետութեան հաշուով արդարացի (ոչ շուկայի) գնահատութեամբ, ի նկատի ունենալով ի միջի այլոց տիրապետութեան հիմունքները: Վճարումը պիտի կատարուի գնման վկայաթղթերով, որոնց տոկոսի մի որոշ մասը կը ստացուի բաժանուած հողի վրայ նշանակուած տուրքից:

49. Պէտք է կազմակերպել պետական լայն օգնութիւն գիւղացիներին՝ գաղթականութեան, տեղափոխութեան եւ տնտեսութիւնը բարւոքելու համար, ինչպէս նաեւ բնութեան պատահարների եւ աղէտների դէպքում: Անջրդի հողերի ոռոգում պետական հաշուով:

50. Օրէնքի միջոցով բարւոքում արենդի պայմանների: Նուազում արենդի՝ օրէնքի սահմանուած նորմայով:

51. Վերացում այժմ գոյութիւն ունեցող կարգերի երկրագործական մշակներ վարձելու վերաբերմամբ: Բանուորական օրէնսդրութեան տարածումը երկրագործական մշակների վրայ: Սահմանում երկրագործական հսկողութեան:

b) Բոլոր եկեղեցապատկան, վանքապատկան, վակուֆային եւ այլ կրօնական հաստատութիւններին պատկանող հողերը:

9. Հողերի բռնագրաւման դէպքում տրւում է վարձատրութիւն թէ մասնաւոր սեփականատէրերին եւ թէ հաստատութիւններին:

10. Վարձատրութեան քանակը որոշում են պետական հողային շրջանային կոմիտէները: Վարձատրութիւնը տալիս է պետութիւնը կամ միանուագ, կամ որոշեալ տարիների ընթացքում, որպէս հողի միակ սեփականատէր եւ ոչ թէ գիւղացին կամ հողագործը, որը հանդիսանում է իբրեւ կապալառու պետութիւնից:

11. Բռնագրաւման չեն կարող ենթարկել՝

a) Տեղական ինքնավարութիւնների, քաղաքների եւ այլ հաստատութիւնների հողերը, որոնք անհրաժեշտ են նրանց կուլտուրական, կրթական, բժշկա-սանիտարական կարիքների համար:

b) Օրինակելի կալուածքները, որոնք կրթական եւ կուլտուրական նշանակութիւն ունեն ազգաբնակութեան համար, առանց ի նկատի առնելու նրանց տարածութիւնները:

c) Գործարանների եւ այլ արդիւնաբերական հիմնարկութիւններին պատկանող հողերը, որոնք անհրաժեշտ են նրանց գործունէութեան համար:

d) Մասնաւոր անձանց եւ հասարակական-կուլտուրական հիմնարկութիւններին պատկանող այգիները, պարտէզները, բանջարանոցները, ցուցադաշտերը, փորձադաշտերը եւ գիւղատնտեսական բուծարանները:

## Է) ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆ

52. Ազատութիւն բանուորական միութիւնների եւ ժողովների:

## Է.
## ԲԱՆՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

1. Ազատութիւն բանւորական միութիւնների եւ ժողովների:

53. Գործադուլի իրաւունք.

Գործադուլի ժամանակ կամ նրա առիթով կատարուած օրինազանցութիւնները պատժվում են օրէնքով սովորական հիմունքներով:

54. Բանւորական օրէնսդրութիւնը տարածել վարձու աշխատանքի բոլոր տեսակների վրայ: Սահմանել աշխատանքի տեսչութիւն, բանւորների ներկայացուցիչների մասնակցութեամբ, աշխատաւորների շահերը պաշտպանող օրէնսդրութեան իրագործման վրայ հսկելու համար:

55. Ութ ժամեայ բանւորական օր սահմանել օրէնսդրական կարգով: Այս նորմայի անմիջական ներմուծումը ամեն տեղ, ուր ներկայումս հնարաւոր է այս, եւ նրա հետզհետէ ներմուծումը միւս արդիւնագործութիւնների մէջ:

56. Արգելել գիշերային եւ նորմայից դուրս աշխատանքները՝ բացի այն դէպքերից, երբ այդպիսի աշխատանքներն անհրաժեշտ են տեխնիկապէս կամ ընդհանուր հասարակական տեսակէտից.

Կանանց եւ անչափահասների աշխատանքի պաշտպանութեան միջոցները ընդարձակել:

57. Սահմանել հաշտարար ատեաններ՝ բաղկացած աշխատանքի եւ կապիտալի կողմից հաւասար թւով ներկայացուցիչներից, վէճերը քննելու եւ վճռելու համար:

58. Պետութեան միջոցով պարտադիր ապահովագրութիւն մտցնել հիւանդութիւնների, դժբախտ դէպքերի եւ պրոֆէսիօնալ հիւանդութիւնների դէմ, ձեռնարկողների հաշւով:

59. Պետական ապահովագրութիւն ծերութեան եւ աշխատանքի անկարողութեան դէմ բոլոր անձնական աշխատանքով ապրողների համար:

## Ը) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

60. Ժողովրդական լուսաւորութիւնը պէտք է կազմակերպուի ազատութեան, հասարակացման եւ ապակենտրօնացման սկզբունքներով:

2. Գործադուլի իրաւունք:

Գործադուլի ժամանակ կամ նրա առիթով կատարուած օրինազանցութիւնները պատժւում են օրէնքով՝ սովորական հիմունքներով:

3. Բանւորական օրէնսդրութիւնը տարածել վարձու աշխատանքի բոլոր տեսակների վրայ: Սահմանել աշխատանքի տեսչութիւն, բանւորների ներկայացուցիչների մասնակցութեամբ, աշխատաւորների շահերը պաշտպանող օրէնսդրութեան իրագործման վրայ հսկելու համար:

4. Ութ ժամեայ բանւորական օր սահմանել օրէնսդրական կարգով: Այդ նորմայի անմիջական ներմուծումը ամեն տեղ, ուր հնարաւոր է ներկայումս եւ նրա հետզհետէ ներմուծումը միւս արդիւնագործութիւնների մէջ:

5. Արգելել գիշերային եւ նորմայից դուրս աշխատանքները՝ բացի այն դէպքերից, երբ այդպիսի աշխատանքները անհրաժեշտ են տեխնիկապէս կամ ընդհանուր հասարակական տեսակէտից:

6. Կանանց եւ անչափահասների աշխատանքի պաշտպանութեան միջոցները ընդարձակել:

7. Սահմանել հաշտարար ատեաններ՝ բաղկացած աշխատանքի եւ կապիտալի կողմից հաւասար թւով ներկայացուցիչներից՝ վէճերը քննելու եւ վճռելու համար:

8. Պետութեան միջոցով պարտադիր ապահովագրութիւն մտցնել հիւանդութիւնների, դժբախտ դէպքերի եւ պրոֆեսիոնալ հիւանդութիւնների դէմ՝ ձեռնարկողների հաշւով:

9. Պետական ապահովագրութիւն ծերութեան եւ աշխատանքի անկարողութեան դէմ՝ բոլոր անձնական աշխատանքով ապրողների համար:

## Ը.
## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

1. Ժողովրդական լուսաւորութիւնը պէտք է կազմակերպուի ազատութեան, հասարակացման եւ ապակենդրոնացման սկզբունքով:

| | |
|---|---|
| 61. Վերացնել դպրոց մտնելու բոլոր սահմանափակումները, որոնք հիմնուած են սեռի, ծագման եւ կրօնի վրայ: | |
| 62. Զանազան տիպի դպրոցների մէջ մտցնել յաջորդականութեան կապ, որով դիւրացուի ստորին տիպի դպրոցից բարձրագոյնը մտնելը: | |
| 63. Ազատութիւն մասնաւոր եւ հասարակական նախաձեռնութեան՝ բանալու եւ կազմակերպելու ամէն տեսակի ուսումնավայրեր նաեւ արտաքոյ դպրոցական կրթութեան համար: Ազատութիւն լեզուի դասաւանդութեան: | 2. Ազատութիւն մասնաւոր եւ հասարակական նախաձեռնութեան՝ բանալու եւ կազմակերպելու ամէն տեսակի ուսումնավայրեր ինչպէս նաեւ արտաքոյ դպրոցական կրթութեան համար:<br>3. Ազատութիւն լեզւի եւ դասաւանդութեան: |
| 64. Լիակատար ինքնավարութիւն եւ դասաւանդութեան ազատութիւն համալսարաններում եւ միւս բարձրագոյն դպրոցներում: Սրանց թիւն աւելացնել, վարձը պակասեցնել: | 4. Լիակատար ինքնավարութիւն եւ դասաւանդութեան ազատութիւն համալսարաններում եւ միւս բարձրագոյն դպրոցներում: |
| 65. Ամէն տեսակ միջնակարգ դպրոցների թիւն աւելացնել. ուսման վարձը պակասեցնել: Տեղական հասարակական հիմնարկութիւնների մեծ մասնակցութիւն միջնակարգ դպրոցների տնտեսական, կրթական եւ դաստիարակչական գործում: | |
| 66. Ընդհանուր, ձրի եւ պարտադիր ուսուցում նախնական դպրոցներում: | 5. Ընդհանուր, ձրի եւ պարտադիր ուսուցում նախնական դպրոցներում: |
| 67. Նախնական ուսուցման գործը պէտք է յանձնուի տեղական ինքնավարութիւնների կարգադրութեան: | 6. Նախնական ուսուցման գործը պէտք է յանձնուի տեղական ինքնավարութիւնների: |
| | 7. Ամէն մի վայրի բնակչութիւն պէտք է իրաւունք ունենայ կրթութիւն ստանալու իր մայրենի լեզւով ուսման բոլոր աստիճաններում: |
| **II. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ** | **I.** |
| **Ա) ՌՈՒՍԱՀԱՅԱՍՏԱՆ** | **ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ** |
| 68. Անդրկովկասի հայաբնակ վայրերում, որոնց սահմանները պէտք է փոփոխել ըստ ազգային համախմբումների, հայերը պէտք է ըստանան ազգային տերիտորեալ աւտոնոմիա՝ օրէնսդրական մարմնով տեղական հարցերի վերաբերմամբ: | 1. Հայ Ժողովրդական Կուսակցութեան նըպատակն է Հայաստանի անջատուած մասերից ստեղծել Միացեալ եւ Անկախ Հայաստան իր սեփական ծովային ելքով: |
| 69. Հայկական աւտոնոմիայի իրաւասութեան ենթարկվում են տեղական բոլոր վարչական, | 2. Հայաստանի սահմաններից դուրս՝ այլ երկրներում ապրող հայերի համար Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը ձգտում է ձեռք բերել ազգային կուլտուրական աւտոնոմիա, հա- |

տնտեսական, կուլտուրական ու դատաստանական գործերը:

70. Հայկական աւտոնոմիայի սահմաններում գործավարութեան պաշտօնական լեզուն համարվում է հայերէնը, ճանաչելով հանդերձ փոքրամասնութիւն կազմող ազգութիւնների լեզուների իրաւունքը:

71. Կենտրօնական կառավարութեան եւ նրա օրգանների, ինչպէս նաեւ ինքնավար մարմինների հետ պաշտօնական յարաբերութիւնները կատարվում են պետական՝ ռուսերէն լեզուով:

72. Հայկական աւտօնօմիայի սահմաններից դուրս գտնուող հայերը վայելում են անձնական ազգային-կուլտուրական աւտօնօմիա, հասարակական-իրաւական միութիւնների իրաւունքով: Նոյն իրաւունքները պէտք է վայելեն հայկական աւտօնօմիայի սահմաններում փոքրամասնութիւն կազմող ազգերը:

73. Եկեղեցական գործերում կուսակցութիւնը ձգտելու է, որ հայ ժողովուրդը, ինչ կրօնի եւ դաւանութեան էլ պատկանի, լիակատար ազատութիւն վայելէ իր եկեղեցական, կրօնական գործերը կարգադրելու մէջ:

74. Հայոց եկեղեցուն պատկանող կալուածները, որոնց արդիւնքով պահպանվում են հայ ժողովրդի հոգեւոր եւ կուլտուրական հաստատութիւնները, կազմում են համազգային անկապտելի սեփականութիւն:

## Բ) ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

75. Հայկական հարցի (Թիւրքահայաստանի) նկատմամբ, ընդունելով որ դա միջազգային հարց է եւ կարող է լուծում ստանալ միջազգային կօնգրէսում, կուսակցութիւնը ամեն կերպ պէտք է աշխատի, որ այդ հարցը լուծուի ըստ թիւրքահայերի ցանկութեան:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԺՈՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը հիմնական նպատակ ունի հաստատել Ռուսաստանում

սարակական իրաւական միութիւնների իրաւունքներով:

## Գ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

### I
### ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ

1) Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը գործում է Հայաստանում եւ նրա սահմաններից

դեմօկրատիական պառլամենտական հանրապետութիւն եւ բարւոքել ժողովրդի աշխատաւոր խաւերի տնտեսական դրութիւնը:

Կուսակցութեան անդամ կարող են լինել այն հայերը, որ ընդունում են կուսակցութեան ծրագիրը եւ համաձայն են ենթարկուելու կուսակցական կարգապահութեան, որպիսին սահմանվում է կուսակցութեան ծրագրով եւ կուսակցական համագումարների կողմից:

Կուսակցութեան անդամներ ընդունում են թէ կենտրոնական եւ թէ այլ կոմիտէտները, ինչպէս նաեւ նրանցից լիազօրուած անձերը: Որեւէ կոմիտէտի կամ նրա լիազօրի կողմից ընդունուած անդամը մտնում է հէնց նոյն կոմիտէտին ենթարկուած կազմի մէջ:

Կուսակցութեան այն անդամները, որոնք ուղղակի կամ կողմնակի գործում են ի վնաս կուսակցութեան շահերի՝ արտաքսվում են նրա կազմից: Արտաքսումը կատարում է կենտրո-

դուրս բոլոր հայաբնակ վայրերում:

2) Հայ Ժողովրդական Կուսակցութիւնն ունի իր ծրագիրը եւ կանոնադրութիւնը՝ հաստատուած կուսակցութեան ք. համագումարի կողմից:

## II
## ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

1. Հայ Ժողովրդական Կուսակցութեան մէջ կարող են լինել այն բոլոր հայերը, առանց սեռի, դաւանանքի եւ դասակարգի խտրութեան, որոնք ընդունում են կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը եւ համաձայն են ենթարկել կուսակցութեան կարգապահութեան:

Ծանօթութիւն. Հայաստանի սահմաններում Հայ Ժողովրդական Կուսակցութեան մէջ կարող են մտնել նաեւ Հայաստանի այլազգի քաղաքացիները:

2. Կուսակցութեան անդամներ ընդունում են թէ կենտրոնական եւ թէ տեղական կոմիտէները, ինչպէս նաեւ նրանց կողմից ուղարկուած լիազօրները այնպիսի վայրերում, ուր դեռեւս չեն կազմակերպուած կոմիտէներ:

3. Անդամագրութիւնը կատարում է համապատասխան կոմիտէն՝ եղած դիմումի հիման վրայ գաղտնի քւէարկութեամբ, նախօրօք խորհրդակցելով թեկնածուի ընդունելիութեան մասին:

Ծանօթութիւն. Կոմիտէները պարտաւոր են այն հին անդամներին, որոնք անդամակցական վճարը դեռ չեն մտցրել, ընդունել նոր կարգով:

4. Կուսակցութեան կարգապահութիւնը պարտադիր է կուսակցութեան բոլոր անդամների համար:

5. Կուսակցական անդամների միջեւ առաջացած կուսակցական վէճերը քննելու են ընկերական կամ միջնորդ դատարանի միջոցով:

6. Կուսակցութեան այն անդամները որոնք ուղղակի կամ կողմնակի կերպով գործում են ի վնաս կուսակցութեան շահերի՝ հեռացւում են նրա կազմից: Հեռացումը կատարում է այն կո-

նական կոմիտէտը։ Եթէ արտաքսածը ցանկանայ՝ վերջնական լուծումը կը յանձնուի կուսակցութեան համագումարին։

Կուսակցութեան անդամները պարբերական վճարքներ են հատուցանում կուսակցութեան գանձարանին, որուն քանակութիւնը որոշում են համագումարները։

Կուսակցութեան օրգաններն են ընդհանուր եւ տեղական համագումարները, կենտրոնական (Թիֆլիսում), շրջանային եւ քաղաքային կոմիտէտները։

միտէն, որի գործունէութեան շրջանի մէջ է գտնւում հեռացողը։

Ծանօթութիւն. Հեռացողը իրաւունք ունի հարցի վերջնական լուծումը ներկայացնել կենտրոնական կոմիտէի քննութեան եւ վերջնական որոշման։

7. Կուսակցական անդամները պարտաւոր են պարբերաբար տալ անդամակցական վճարներ, որոնց քանակը որոշում են զանազան վայրերի կենտրոնական կոմիտէները։

III

## ՏԵՂԱԿԱՆ ՃԻՒՂԵՐ

1. Ամեն մի բնակավայրում (քաղաք, գիւղ եւ այլն), որտեղ կը լինեն 10-ից ոչ պակաս կուսակցութեան յարողներ՝ կազմակերպւում է տեղական ճիւղ։

2. Տեղական ճիւղերը ունեն իրենց ընդհանուր ժողովները եւ տեղական կոմիտէները։ Տեղական կոմիտէները, բաղկացած երեք անդամից գիւղերում եւ հինգ անդամից քաղաքներում, ընտրւում են տեղական ընդհանուր ժողովի կողմից մի տարի ժամանակով։

Ծանօթութիւն. ա) տեղական կոմիտէները ժամանակից առաջ կարող են լուծւել տեղական ճիւղերի ընդհանուր ժողովի առաջարկութեամբ եւ կենտրոնական կոմիտէի որոշումով։

բ) Թոյլատրւում է կոոպտացիայի իրաւունքով հրաւիրել իրենց կազմի մէջ գիւղական կոմիտէներին՝ մէկ անդամ, քաղաքային կոմիտէներին՝ երկու անդամ։

3. Տեղական կոմիտէները ունեն իրենց նախագահութիւնը՝ մի նախագահ, մի քարտուղար ու մի գանձապահ։

4. Տեղական կոմիտէները վարում են կուսակցութեան գործերը իւրաքանչիւրը իր վայրի սահմաններում, առաջնորդւելով թէ այն կանո-

նադրութեամբ եւ թէ այն հրահանգով, որոնք սահմանում են կուսակցութեան ընդհանուր համագումարների եւ նրա կենտրոնական կոմիտէների կողմից:

[5.] Իւր[աք]անչիւր տարուայ վերջը տեղական ճիւղերը կազմում են առաջիկայ տարուայ իրենց ծախսերի նախահաշիւը, որը Հոկտեմբերից ոչ ուշ ներկայացնում են ի հաստատութիւն իրենց շրջանային կոմիտէին: Շրջանային կոմիտէները ճիւղերի հաստատուած նախահաշիւները ուղարկում են կենտրոնական կոմիտէի հաստատման:

6. Տեղական ճիւղերից ստացուած եկամուտներից մէկ մասը յատկացւում է կենտրոնական կոմիտէի ծախսերի համար, իսկ մնացեալ մասը պահւում է ամեն մի ճիւղի գանձարանում՝ ճիւղի ծախսերը հոգալու:

7. Տեղական ճիւղերը ամիսը 1-2 անգամ պարտաւոր են տեղեկացնել կենտրոնական կոմիտէներին իրենց գործունէութեան մասին:

## IV

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԻՒՂԵՐԸ

1. Իւրաքանչիւրի շրջանի տեղական ճիւղերը միանալով կազմում են շրջանային ճիւղ:

2. Շրջանային ճիւղերի օրգաններն են՝ շրջանային համագումարներ եւ շրջանային կոմիտէներ:

3. Շրջանային համագումարները հրաւիրւում են ոչ պակաս քան տարին մի անգամ: Պատգամաւորների ներկայացուցչութիւնը շրջանային համագումարներում սահմանւում է հետեւեալ կերպով. իւրաքանչիւր տեղական ճիւղի կոմիտէն տալիս է մի պատգամաւոր, բացի դրանից մինչեւ 50 անդամ ունեցող ճիւղը եւս մի պատգամաւոր, իսկ այնուհետեւ իւրաքանչիւր 100 անդամից մէկը:

4. Շրջանային համագումարը վճռում է շրջանին վերաբերեալ հարցերը, առաջնորդուելով ընդհանուր համագումարի եւ կենտրոնական կոմիտէի տուած հրահանգներով եւ նրանց սահմանած կանոններով եւ իւր կողմից տալիս է հրահանգներ իւր շրջանի տեղական ճիւղերի կոմիտէների գործունէութեան մասին:

5. Շրջանային համագումարը ընտրում է մի տարի ժամանակով շրջանային կոմիտէ, բաղկացած եօթ անդամից, որոնք իրենց միջից ընտրում են մի նախագահ, մի փոխ նախագահ, մի քարտուղար եւ մի գանձապահ:

Ծանօթութիւն. Այն շրջաններում, ուր տեղական ճիւղերը շրջանային համագումար չեն ունեցել եւ չեն ընտրել շրջանային կոմիտէներ, այնտեղ շրջանի գլխաւոր քաղաքի քաղաքային կոմիտէները ժամանակաւորապէս կատարելու են շրջանային կոմիտէների գործերը:

6. Շրջանային կոմիտէները վարում են անմիջապէս շրջանի գործերը եւ ղեկավարում են տեղական ճիւղերի գործունէութիւնը:

## V

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆԵՐ

1. Կենտրոնական կոմիտէներ ընտրւում են Հայաստանում եւ այլ երկրներում: Իւրաքանչիւր կենտրոնական կոմիտէ վարում է ատոնոմ հիմունքներով իր երկրի բոլոր կուսակցական-քաղաքական գործերը: Կենտրոնական Կոմիտէների վայր լինելու են մայրաքաղաքները:

Կենտրոնական կոմիտէտին են վերապահւում՝ ընդհանուր ղեկավարութիւնը կուսակցութեան գործունէութեան, հրատարակումը ամեն տեսակ ակտերի կուսակցութեան անունից, կարգադրութիւնը կուսակցութեան հրատարակութիւնների վերաբերմամբ, ելեւմուտի նախագծի կազմումը եւ կուսակցութեան կենտրոնական գանձարանի կարգադրութիւնը:

2. Կենտրոնական կոմիտէները, բաղկացած եօթ անդամից, ընտրւում են երկրների կուսակցական ճիւղերի անդամներից մէկ տարի ժամանակով եւ գաղտնի ձայնատուութեամբ:

Կենտրոնական կոմիտէտն ընտրվում է կուսակցութեան ընդհանուր համագումարից մի տարի ժամանակով գաղտնի ձայնատվութեամբ համագումարի անդամների միջից: Կենտրոնական կոմիտէի անդամների թիւը որոշում է համագումարը:

Ծանօթութիւն. ա) Եթէ մի տարուց յետոյ համագումար չի կայանում, նոյն կոմիտէն շարունակում է գործել մինչեւ առաջիկայ համագումարը:

բ) Թոյլատրւում է կոոպտացիայի իրաւունքի հիման վրայ կենտրոնական կոմիտէի կազմի մէջ հրաւիրել նաեւ երեք նոր անդամ:

Կենտրոնական կոմիտէին իրաւունք է տրվում լրացնել իր կազմը նոր անդամներով այն կարգով, որ սահմանում են համագումարները:

3. Կենտրոնական կոմիտէների ներքին կազմակերպումը այն խնդիրներում, որոնք նախատեսուած չեն սոյն կանոնադրութեամբ կատարւում է նոյն կոմիտէների կողմից:

Կոմիտէի ներքին կազմակերպումը այն կէտերում, որ նախատեսուած չեն համագումարի որոշներով՝ կատարում է նոյն ինքն կոմիտէտը:

4. Կենտրոնական կոմիտէները իրենց կազմից ընտրում են մի նախագահ, երկու փոխնախագահ, մի քարտուղար եւ մի գանձապահ:

5. Կենտրոնական կոմիտէները պարտաւորւում են սերտ կապ պահպանել տեղական կոմիտէների հետ պարբերաբար (ամսական 3 անգամ) տեղեկութիւն տալով նրանց քաղաքական անցուդարձի եւ կուսակցական ընդհանուր գործունէութեան մասին, տալով հարկաւոր դէպքում համապատասխան անհրաժեշտ հրահանգներ:

6. Կենտրոնական կոմիտէները իրանց միջից կազմում են մասնաժողովները, զանազան հարցեր ուսումնասիրելու կամ այլ յանձնարարութիւնների համար: Այդ մասնաժողովների անդամները պարտաւոր են կենտրոնական կոմիտէի նիստերին պարբերաբար զեկուցանել մասնաժողովների աշխատանքների մասին:

7. Մի որեւէ երկրի կենտրոնական կոմիտէի անդամ, գտնուելով մի այլ երկրում, մասնակցում է այդ երկրի կենտրոնական կամ տեղական կոմիտէի նիստերին վճռողական ձայնի իրաւունքով:

8. Տեղական եւ շրջանային կոմիտէների անդամները, գտնուելով իրանց կենտրոնական կոմիտէի վայրում, կարող են մասնակցել նրա նիստերին խորհրդակցական ձայնի իրաւունքով, իսկ երբ նրանք գալիս են տեղական կամ շրջանային կոմիտէների յանձնարարութեամբ կուսակցութեան վերաբերեալ գործերով, այդ խնդիրների քննութեան ժամանակ կենտրոնական կոմիտէի նիստերին նրանք եւս մասնակցում են վճռողական ձայնի իրաւունքով:

9. Երկրային կենտրոնական կոմիտէները հրաւիրում են երկրային ճիւղերի համագումար ոչ պակաս, քան տարին մի անգամ, որը վճռում է երկրին վերաբերեալ կուսակցութեան գործունէութեան հարցերը, ընտրում է կենտրոնական կոմիտէ եւ հաստատում է կենտրոնական կոմիտէի նախահաշիւը:

## VI

## ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Կուսակցութեան գերագոյն խորհրդի կազմի մէջ են մտնում երեք հոգի ընտրուած ընդհանուր համագումարից, երեք անդամ Հայաստանի

եւ 2-ական անդամ էլ Վրաստանի եւ Ադրբէջանի կենտրոնական կոմիտէների կողմից:

Ծանօթութիւն. Կենտրոնական կոմիտէները կարող են ընտրել խորհրդի անդամներ թէ՛ իրենց կազմից եւ թէ՛ կուսակցութեան այլ անդամներից:

2. Գերագոյն խորհուրդը իրաւասու է՝

ա) Լուծել համազգային եւ ընդհանուր կուսակցական բնոյթ ունեցող հարցերը:

բ) Պարզաբանել կուսակցութեան ծրագրային եւ կազմակերպչական հարցերը:

գ) Ընդհանուր վերին հսկողութիւն ունենալ բոլոր կենտրոնական կոմիտէների գործունէութեան վրայ:

դ) Լուծել կենտրոնական կոմիտէների միջեւ ծագած տարաձայնութիւնները եւ վէճերը, իսկ նրանցից մէկի կողմից բողոք յարուցելու դէպքում Գերագոյն Խորհուրդը այդ տարաձայնութիւնները ներկայացնելու է ընդհանուր համագումարին:

3. Գերագոյն Խորհուրդը իր գործունէութեան համար պատասխանատու է միայն ընդհանուր համագումարի առաջ:

4. Գերագոյն Խորհրդի մշտական վայրն է հանդիսանում Հայաստանի մայրաքաղաքը:

5. Գերագոյն Խորհրդի այն անդամները, որոնք գտնւում են Հայաստանի մայրաքաղաքում, կազմում են նրա գործադիր մարմինը:

## VII

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Կուսակցութեան ընդհանուր համագումարները հրաւիրվում են կենտրոնական կոմիտէներից առ նուազն տարին մէկ անգամ:

1. Կուսակցութեան ընդհանուր համագումարները հրաւիրւում են Գերագոյն Խորհրդի կողմից ոչ պակաս, քան տարին մի անգամ. հարկաւոր դէպքում, ըստ հայեցողութեան Գերագոյն Խորհրդի հրաւիրւում են նաեւ արտակարգ համագումարներ: Հերթական համագումարների տեղը որոշում է ամեն անգամ ինքը համագումարը, իսկ արտակարգ համագումարներինը՝ Գերագոյն Խորհուրդը:

Ընդհանուր համագումարները բաղկանում են կենտրոնական կոմիտէի անդամներից, ներկայացուցիչներից այն շրջանների եւ քաղաքների, որոնք ունին կուսակցական կոմիտէներ, այն անդամներից, որոնք հրաւիրուած են կենտրոնական կոմիտէից, եւ այն անձերից, որ ինքը համագումարը հրաւիրում է իր աշխատանքին մասնակցելու:

Ներկայացուցիչների քանակութեան բաշխումը կատարում է կենտրոնական կոմիտէն: Կենտրոնական կոմիտէի հրաւիրած անձերի թիւը չը պէտք է լինի աւելի, քան համագումարի ենթադրուած կազմի քառորդական մասը:

Ընդհանուր համագումարները վճռում են այն հարցերը, որոնք վերաբերում են ծրագրի լրացման եւ ընդլայնման եւ կուսակցութեան կազմակերպութեան, որոշում են տակտիկան, կատարում են կենտրոնական կոմիտէի ընտրութիւն, հաստատում են նրա հաշուետուութիւնը, ելեւմուտքը եւ որոշում են տալիս ամեն տեսակ խնդիրների մասին, որ վերաբերում են կուսակցութեան եւ նրա օրգաններին:

2. Ընդհանուր համագումարը բաղկանում է Գերագոյն Խորհրդի, Հայաստանի եւ այլ երկրների կենտրոնական կոմիտէների անդամներից, կառավարութեան եւ պարլամենտի կուսակցական անդամներից, շրջանային եւ տեղական միւղերի (կոմիտէների եւ ընդհանուր ժողովների) ներկայացուցիչներից, ինչպէս նաեւ կուսակցական այն անդամներից եւ այն անձերից, որոնք հրաւիրւում են Գերագոյն Խորհրդի եւ համագումարի աշխատանքներին մասնակցելու: Այդ կարգով հրաւիրուած անձերի թիւը չը պէտք է լինի աւելի, քան համագումարի ենթադրուած կազմի մէկ տասներորդ մասը:

3. Ընդհանուր համագումարները վճռում են այն հարցերը, որոնք վերաբերում են կուսակցութեան ծրագրի փոփոխման եւ կուսակցութեան կազմակերպութեան, որոշում են կուսակցութեան տակտիկան, կատարում են Գերագոյն Խորհրդի երեք անդամի ընտրութիւնը, հաստատում են Գերագոյն Խորհրդի նախահաշիւը, սահմանում են կանոններ եւ հրահանգներ կուսակցութեան մարմինների եւ օրգանների համար, որոշումներ են տալիս ամեն տեսակ խնդիրներին, որոնք վերաբերում են կուսակցութեան ընդհանուր գործունէութեանը:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. *Ժողովուրդ* (Երեւան), 22 Օգոստոս 1918։
2. Դաւիթ Անանուն, *Ռուսահայերի Հասարակական Զարգացումը*, հատոր երրորդ (1901-1918), Վենետիկ, Ս. Ղազար, 1926, էջ 163-164։ Վ. Ղազարեան, *Ռամկավար Ազատական Կուսակցութիւն*, ուղեցոյց եւ համառօտ պատմութիւն, Երեւան, 1971, էջ 76։
3. Հ. Ա. Համբարեան, «Արեւելեան Հայաստանում հողային հարցի լուծման լիբերալ եւ դեմոկրատական ուղիները XX դարի սկզբին», *Պատմա-բանասիրական հանդէս*, Երեւան, 1990, թիւ 4, էջ 47-48։
4. Tadeusz Swietochowski, *Russian Azerbaijan, 1905-1920 : The Shaping of National Identity in a Muslim Community*, Cambridge University Press, 1985, pp. 48-51.
5. Անանուն, Դ., էջ 605-607։
6. *Ժողովուրդ*, 22 Օգոստոս 1918։
7. *Ժողովուրդ*, 29 Օգոստոս 1918։
8. Նոյն։
9. *Ժողովուրդ*, 26 Սեպտեմբեր 1918։
10. Ս. Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, Պէյրութ, 1958, էջ 197։
11. *Ժողովուրդ*, 14 Մարտ 1919։
12. Այս մասին տես՝ *Ժողովուրդ*ի Դեկտեմբեր 11 եւ 13, 1918-ի խմբագրականները։
13. *Ժողովուրդ*, 7 Մայիս 1919։
14. *Ժողովուրդ*, 17 Սեպտեմբեր 1919։

# THE STATUTES OF THE ARMENIAN POPULIST PARTY
(Summary)

ARA SANJIAN

The metamorphosis of the Armenian Populist party started with the coming forth of the Russian Popular Freedom Party, better known as the Kadet and founded in Moscow on 18 October 1905. The Armenian Populist movement started in the January of 1906 as a Radical Armenian Faction of the Constitutional Democratic Party, but as many other political parties in the Russian Empire, and specially in the Caucasus, it came to an end with the failure of the Russian Revolution of 1905-1907.

The Constitutional Democratic Party was once more revived in the March-May period of 1917 just after the February Revolution got victorious. The next few months witnessed a radical change in the party platform from the Russian Kadet context to a purely Armenian democratic character. Then it changed its seat from Tbilissi and settled in Yerevan, the capital of the new independent Armenia. The next two years saw the growth of the party and its hearty participation in the activities of the Armenian parliamentary government. But the Armeno-Turkish war of 1920 toppled down every thing. The Armenian Populist Party came to end with all the other political factions and parties in the Republic of Armenia when the country was declared a soviet republic and all political activity was banned. Yet the ramifications of the party in the Armenian Diaspora came to found the Armenian Democratic Liberal Party as the Party's offshoot.

After a short introductory note, the article ends with two statutes — one that of 27 September 1917 and the other, that of 15 September 1919 — which show the metamorphosis of this Armenian Political Party.